ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Արևելյան գործընկերության երկրներում ժողովրդավարական հաստատությունների ամրապնդում – ԵՄ-ի կողմից աջակցվող և ֆինանսավորվող ODIHR նախագիծ:



Իրականացման ժամանակահատված: 01.01.2024 - 31.12.2027

ԱԼԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 5 835 932

Ընդհանուր բյուջե: € 6 143 086

Նախագծի կայքէջ: osce.org/node/572410

Նախագծի նկարագրություն:

Այս նախագծի շրջանակում Արևելյան գործընկերության երկրներին տրամադրվում է աջակցություն՝ օգտվելու ODIHR-ի մշակած գործիքներից և մեթոդներից, որոնք ուղղված են ժողովրդավարական կառավարման համակարգերի ամրապնդմանը: Նախաձեռնությունը հիմնված է օրենքի գերակայության և մարդու իրավունքների հարգման սկզբունքների վրա և նպատակ ունի բարձրացնել հանրային վստահությունը պետական հաստատությունների նկատմամբ, խթանել ավելի ներկայացուցչական կառավարումը, ինչպես նաև ապահովել ավելի ներառական և մասնակցային քաղաքական և որոշումների կայացման գործընթացներ: Այս ամենը նպաստում է ինչպես ընթացիկ ճգնաժամերին ավելի արդյունավետ արձագանքելուն, այնպես էլ ապագա մարտահրավերների նկատմամբ ավելի մեծ դիմակայունություն ձևավորելուն:
Ծրագրի աջակցությամբ պետությունները կարող են մշակել և իրականացնել ավելի արդյունավետ քաղաքականություններ, ինչպես նաև գնահատել իրենց առաջընթացը հաշվետու և ներառական ժողովրդավարական ինստիտուտների զարգացման, հանրային բարեվարքության համակարգերի ամրապնդման, մարդու իրավունքներին համապատասխան իրավական շրջանակների ձևավորման, քաղաքական կուսակցությունների գործունեության կարգավորման և քաղաքական կյանքում պատմականորեն քիչ ներկայացված խմբերի մասնակցության ընդլայնման ուղղությամբ:
Նախագիծը հիմնվում է ODIHR-ի տարածաշրջանային փորձի և գործընկերների լայն ցանցի վրա, ինչը հնարավորություն է տալիս կազմակերպել փորձի փոխանակում և քննարկումներ տարբեր երկրների միջև: Այս

Ակնկալվող արդյունքներ:

1. Ժողովրդավարական հաստատությունները ավելի արդյունավետ են նախաձեռնում և իրականացնում փաստերի վրա հիմնված բարեփոխումներ, ապահովելով ավելի բարձր հաշվետվողականություն, բարեվարքություն և ներառականություն:
2. Քաղաքական կուսակցությունների գործունեությունը կարգավորվում է օրենքի գերակայության և մարդու իրավունքների սկզբունքներին համապատասխան, ներառելով նաև գենդերային հավասարության նկատմամբ զգայուն մոտեցումներ:
3. Վարչական արդարադատության մարմինները, որոնք քննում են ընտրական վեճերը և պաշտպանում հիմնարար քաղաքացիական ու քաղաքական իրավունքները, գործում են ավելի արդյունավետ և միջազգային չափանիշներին համապատասխան:
4. Ամրապնդվել է համագործակցությունը ընտրական գործընթացների բարելավման հիմնական առաջարկությունների իրականացման ուղղությամբ Արևելյան գործընկերության երկրներում: